

EXPO BEIRUT
EID &
CHRISTMAS EXPO

27 November - 23 December
Daily from 4:00 to 10:00 p.m.
with the participation
of foreign countries
Expo Beirut -
Next to Phoenicia hotel
Tel: 01 / 361040

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 75ԳԿ ՏԱՐԻ, ԹԻՒ 224 (21274) ԵՐԵՎԱՆԻ, 3 ԳԵԿՏԵՄԵՐ 2002 10 ԷՁ

ԱՂԱՏԱՐԻ ԳՎԵՏՊԱՆ ՓՍՍԱԲԱՆԸ
ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԳԻՄՈՒՄ
ՆԵՐԿԱՅՅՈՒՑԱԾ Է

ԹԵՂԵՍ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի այլա-
խոհ մտաւորական Հաշէմ Աղաճարիի
պաշտպան փաստաբանը վերադառնալով
նրա հիմուն ներկայացուցած է, վերադառնալով
թեան եւթարկելու համար մահապատժի, որ
բողոքի մեծ ցոյցեր հրահրած էր երկիրի տա-
րածքին:
Գաւական աղբիւրներ յայտնեցին, որ
փաստաբանը դիմումը ներկայացուցած է
Նոյեմբեր 30ին, սակայն Երկուշաբթի օր
(Երկ) հասած է Համատանի վերադառնալու
տեւանին, որ արձակած էր մահապատժի:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԶՆՁԵՑ ԶՈՒՐԻ ԵՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ 1995ԷՆ 2001 ՉԿՃԱՐՈՒԱԾ ԸԱՇՈՒԵՑՈՅՑԵՐԸ

Խորհրդարանը երէկուան իր լիազօւմար նիստին, յետ քննարկումներու, վաւերացուց շարք մը օրինա-
գիծեր, որոնց մէջ յատկանշական եղան ջուրի եւ
էլեկտրականութեան 1995էն 2001 չվճարուած
հաշուեցոյցերու ջնջումը: Խորհրդարանը նաեւ վաւե-
րացուց օրինագիծ մը, որուն հիմամբ, կառավարու-
թիւնը կը հրաժարի երկու միլիառ տոլար գումարի
փոխատուութիւն առնելէ, ինչպէս յիշուած է 2003ի
պետական պիւտճէի նախագիծին մէջ, ինչպէս նաեւ
կը խոստանայ, որ պետութեան օտար դրամանիշով

պարտքերը պիտի չզերագանցեն ազգային դրամանի-
շով պարտքերուն:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի գլխաւո-
րեց նիստը, որուն ներկայ եղան վարչապետ Ռաֆիք
Հարիրի, նախարարներ եւ երեսփոխաններ:

Լիազօւմար նիստը իր աշխատանքներուն սկսաւ
առաւօտեան ժամը 10:45ին: Նիստէն կը բացակայէին
երեսփոխաններ՝ Նազէմ Սուրի, Նամթալա Ապի
Նասըր, Փիեռ ժեմայէլ, Ղաթթաս Սուրի, պաշտպա-
նութեան նախարար Սալիլ Հըրաուի եւ փոխ վարչա-
պետ Իսմ Ֆարէս:

Նախքան նիստին գումարումը Պըրրի պահանջեց
մէկ վայրկեան յոտնկայ լուծութեամբ յարգել նախկին
երեսփոխան Իպրահիմ Ապտալալայի յիշատակը: Ան
ապա բարի գալուստ մաղթեց նորանշանակ երեսփո-
խան Ղասսան Մուխայպէրի:

Ապա Պըրրի խօսքը յանձնեց երեսփոխան Նիքոլա
Ֆաթթուշի, որ իր կարգին պահանջեց մէկ վայրկեան
յոտնկայ լուծութեամբ յիշատակել «Փարիզ - 2» տնտե-
սական բարգաւաճման վեհաժողովը՝ յայտնելով, որ
«կը գտնուինք հայրենիքի մը մահուան դիմաց»:

Ֆաթթուշ քննադատեց երկրին ներքին միասնա-
կանութեան մասնատումը, ինչպէս նաեւ ժողովրդա-
վարութեան միայն անունով գոյութիւնը եւ ժողո-
վուրդին կողմէ երկրին օրէնքներն ու կանոնները
ծաղրանքի ենթարկելու երեւոյթը:

Առաւօտեան նիստին խորհրդարանը վաւերացուց
17 օրինադիւտեր, որոնցմէ գլխաւորը՝ կառավարու-
թեան արտօնութիւն տալ Եւրոպական Միութեան
հետ գործակցութեան համաձայնութիւնը վերանորո-
գելու եւ Ասի գետի ջուրերէն օգտագործման ծրա-
գիրը իրականացնելու:

Շար.՝ Էջ 3

ԱԶՐԴԵՅՑԱՆ ԹՈՒՐԲՈՅ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԱԿԵՐՏՆ Է

ՊԱՔՈՒԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԿՈՏՐՏԵՆ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ՀԱԶԱՐԱՄԵԱՅ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Իրանի մեր պաշտօնակից «Այիք» օրաթերթը հաղորդեց, որ Այրաբեյ-
ճան հերթական վանտալիքի կ'ենթարկէ Ջուղայի պատմական կոթողները:
Իշխանութիւններուն կողմէ քարուքանդ կ'ըլլան Ջուղայի (պատմա-
կան Ջուլֆա) հայկական գերեզմանատան հազարամեայ խաչքարերը:
Հին Ջուղայի գերեզմանատան Հովիտի մատուցը, որ տակաւին կանգուն
էր, հողին հաւասարեցուցած է:
«Այիք» Իրանի Հայկական Յուշարձաններու Պահպանման յանձնա-
խումբէն տեղեկացած է, որ մէկ շաբաթէ ի վեր Այրաբեյճանի պետութեան
կողմէ ծրագրուած քանդումի կ'ենթարկուի պատմական Ջուղայի հայ-
կական գերեզմանատունը: Անողորմ ձեռով կը փշրուին հազարամեայ
խաչքարերը, կը պղծուին շիրիմները, որոնք 12րդ դարու սկիզբէն 17րդ
դարերու վերջերը երկարող արձանագրութիւններ եւ պարզաքանդակ-
ներ կը կրեն:


Հայկական պատմական գերեզմանատունը կը գտնուի Իրանի Ջուլ-
ֆա քաղաքէն շուրջ 10 քմ. հեռավորութեան վրայ, Արաքս գետի հիւսի-
սային ափին ի վեր, եւ կը տարածուի երեք տարբեր բլուրներու վրայ, ուր
իրաքանչիւր կը ներկայացնէ տարբեր ժամանակաշրջան: 20րդ դարու
սկիզբը գերեզմանատան մէջ կը գտնուէր 12 հազար խաչքար: Ժամա-
կակի ընթացքին, ծրագրուած ձեռով ոչնչացման պատճառով հոն մնա-
ցած էր հազիւ երկու հազար խաչքար՝ կանգուն կամ տապալած, իսկ շի-
րիմները, որոնք ընդհանրապէս նոր ջուղայեցիներու նախահայրերու
շիրիմներն են, սրբապղծուած էին:

Շուրջ 5 տարի առաջ Այրաբեյճանի պուլտովներով քանդած էր գե-
րեզմանատունը եւ քանդուած խաչքարերը տեղափոխած էր այլ վայ-
րեր: Հետեւողական բողոքներուն իբրէւ արդիւնք ԵՈՒՆԵՍԿՕ ղիմած
էր միջոցներու՝ առաջըր առնելու համար Այրաբեյճանական վանտալիք-
մին:

Հայկական պատմամշակութային կոթողներուն հանդէպ Այրաբեյճա-
նի վերջին բարբարոսութեան ի տես, Իրանի Հայկական Յուշարձաննե-
րու Պահպանման յանձնախումբը կոչ ուղղած է ղիմել առ որ անկ է՝ կա-
ւեցնելու համար միջազգային առումով մեծ արժէք ներկայացնող կո-
թողներուն «պանդր»:

ԻՐԱԿԱՆԻՆ ՄԷՁ ԻՐՆՉ ԿԸ ՅԱՆԿԱՅ ԹՈՒՐԲՈՒՄ
ԷՁ 5

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅՅՈՒՑՈՒՑԻՉԸ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ՉՕՐ. ԼԱՀՈՒՑԻ



Հանդիպումին խորհրդակցութիւնները կեդ-
րոնացան շրջանային եւ տեղական քաղաքա-
կան իրադարձութիւններուն վրայ: Խորհրդակ-
ցութիւններու առանցք դարձան նաեւ «Փա-
րիզ-2» ժողովին արդիւնքները եւ անոնց գործ-
նականացման միջոցները:

ԺԱՄԱՑՈՅՑԻ ԴԵՄ ՄՐՑՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դիւանագետներ այս շաբաթ դիւանագիտական
վերջին արշալի մը պիտի ձեռնարկեն՝ Կիպրոսի վե-
րամիացման համար ՄԱԿի խաղաղարար ծրագիրը
ընդունել տալու նպատակով:

Հակառակ թափ ստացող ցուցանիշներու, թէ
անոնց ճիգերը կրնան ի դերել ելլել՝ ինչ կը վերաբե-
րի 10 օրուան մէջ համաձայնութիւն մը ապահովե-
լու կարելիութեան, բարձրաստիճան շարք մը դիւա-
նագետներ կը պատրաստուին Աթէնքի, Անգարայի
եւ Նիկոսիոյ վրայ ճնշում բանեցնել՝ Դեկտեմբեր
12ի Քոպենհագենի վեհաժողովէն առաջ, ուր Կիպ-
րոս պիտի հրաւիրուի 2004ին Ե. Միութեան անդա-
մակցելու:

Այցելութիւններու անցախընթաց շարքով մը, Մ.
Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար
Մարք Կրոսմըն կը ծրագրէ այս շաբաթ այցելել երեք
մայրաքաղաքները, Բրիտանիոյ արտաքին գործոց
նախարար Դէր Սթրո Անգարա պիտի հասնի այսօր,
մինչ ՄԱԿի ներկայացուցիչ Ալվարտո Տէ Սոթո անձ-
նական օդանավ մը վարձած է՝ քանի մը անգամ շրջե-
լու համար երեք մայրաքաղաքները:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան մին-
չեւ յառաջիկայ շաբաթ սկզբունքային համաձայնու-
թիւն մը կ'ուզէ յոյժ եւ թուրք կիպրացի համայնքնե-
րուն միջեւ:

Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԺՈՂՈՎԵՆ ԱՈԱՋ ԸՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՈՒՉԷ

Դանիոյ արտաքին գործոց նախարար Փեր Շթիկ
Մեյլըր, որուն երկիրը Ե. Միութեան ներկայ նախա-
գահն է, երէկ կոչ ուղղած է Յունաստանի եւ Թուր-
քիոյ, որ ժամանակի դէմ մրցումի մը ձեռնարկեն՝
Կիպրոսի հարցը լուծելու համար Դեկտեմբեր 12ի
վեհաժողովէն առաջ:

Մեյլըր ըսած է նաեւ, որ վեհաժողովէն առաջ
Շար.՝ Էջ 2

ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՄՊԱՆՆԵՑԻՆ ՊԱՂԵՍՏԻՆՑԻ ԱՆՉԷՆ ՊԱՏԱՆԻ ՄԸ



Իսրայէլացի զինուոր մը կը խոշտանգէ պաղեստինցի հայր մը,
մինչ անոր երեխաները ակացատես կ'ըլլան վայրագութեան

Իսրայէլեան ուժեր
Ժենինի շուկաներէն մէ-
կուն մէջ սպաննեցին
պաղեստինցի պատանի
մը եւ 16 ուրիշներ ալ վի-
րաւորեցին, յայտնեցին
պաղեստինցի ականա-
տեսներ եւ հիւանդանո-
ցային աղբիւրներ: Վայ-
րագութիւնը թափ ստա-
ցաւ նաեւ Կազայի մէջ,
ուր իսրայէլեան բանակը
նախաձեռնեց, որ սպաննեց
պաղեստինցի մը, որ իր-
րեւ իսրայէլացի զինուոր
ծաղուած էր՝ յարձակե-
լու համար բանակին դի-
րքէն մէկուն վրայ: Մի-
ջազգայր տեղի ունեցած է
Նեցարիմ ընկնեցման
վայրին մօտ, ուր վիրա-
ւորուած է իսրայէլացի
զինուոր մը:
Ժենինի մէջ, երկու
հրատարակու եւ երկու
զրահապատ փոխադրա-
կառքերու ընկերակցու-
թեամբ, իսրայէլացի զին-
ուորներ կրակ բացին
Ֆիթիլի տօնին նախօրեա-
կին գնում կատարող
պաղեստինցիներու
վրայ, յայտնեցին ակա-
նատեսներ: Բանակը
յայտնեց, որ զինուորնե-
րը ժենինի ուղարկուած
էին հաստատելու համար
կրակմարի գրութիւն մը:
Ըստ բանակին հրապա-
րակած յայտարարու-
թեան՝ զինուորները
կրակ բացած են՝ հակա-

Շար.՝ Էջ 10

ՀՅՅԱՍՏԱՆԻ ՆՍԽԱԳԱՀԱԿԱՆ ՐԵՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՐԴ՝ 12 ԹԵԿՆԱԾՈՒ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնա-
ժողովի մամոյ քարտուղար Լիլիթ Սեդրակեան երէկ
յայտարարեց, որ յանձնաժողովը ստացած է Հա-
յաստանի նախագահական յառաջիկայ ընտրու-
թիւններուն (Փետրուար 2003) համար Արշակ Սա-
ղոյեանի թեկնածութեան փաստաթուղթերը: Ազգա-
յին ժողովրդավարական Միութեան (ԱԺԿ) նախկին
անդամ Արշակ Սաղոյեան թեկնածու առաջադրուած
է իր ղեկավարած կուսակցութեան՝ Ազգային Ժո-
ղովրդավարներու Դաշինքին (ԱԺԴ) կողմէ: Սեպ-
տեմբեր 29ին Կեդրոնական Ընտրական Յանձնա-
ժողովը
Շար.՝ Էջ 10

ՊԵՅՅԵԼԿԵՆ ԵՒ ՄՈՍԿՈՒՄՅԵՆ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԿՈՉ ՄԸ՝ ՓՈՒՆԿԵԱՆԿԻ



Փութին Գպատակադրած է չից ղեկավարներուն
հետ միացելու ԵՆՏԻՆԿՈՂ մը գտնելու ապահովութեան
հարցերու վերաբերեալ

ՊԵՅՅԻՆԿ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- Բուսիա եւ Չի-
նաստան Երկուշաբթի օր կոչ ուղղեցին Հիւսի-
սային Զորային՝ հրամարելու կորիպային պէն-
քերու իր ծրագիրէն, Փոնկեանկի դաշնակից-
ներուն կողմէ քորեական թերակողպիին վրայ
մերձեցումի գծով ցարդ ամէնէն ուժեղ կոչով
մը:

Սակայն Պէյճիւնի մէջ տեղի ունեցած վեհա-
ժողովէ մը ետք միացեալ յայտարարութիւն մը
Շար.՝ Էջ 2

ՊՈՒՇ ԵՒ ԹԱԿԱՆ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՏՐԱՄԱԳՐԷ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԹՈՒՐԲՈՒՄ ԷՁ 6

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐ ԿԸ ԼՈՒՍԱԲԱՆԵՆ

Պաշտոնական աղբիւրներ երկ հաստատեցին, որ բջիջային հեռաձայնի ընկերություններում մասին նախարարաց խորհուրդին տուած վերջին որոշումը կ'երաշխարհէ պետութեան իրաւունքները եւ կրնայ ապահովել յաւելւալ մուտքեր, որոնք նախապէս նկատելի չէին: Անոնք նաեւ ըսին, որ որոշ կողմեր կանոնաւոր կերպով կ'աշխատին հակառակ տարածել, թէ պետութիւնը կը գտնուի իր իրաւունքներէն զիջելու դիրքին մէջ, եւ ընդունած է այն, ինչ որ մերժած էր երկ:

Աղբիւրները շեշտեցին, որ այն սկզբունքները, որոնք հաստատուած էին նախագահ Վոր. Էմիլ Լահուտի կողմէ՝ բջիջային հեռաձայնի ընկերություններուն թղթածրարին հարցով, տակաւին կը մնան նոյնը, եւ որոնցմէ հիմնականը այն է, թէ պետութեան դրամը կը պատկանի միայն պետութեան, եւ թէ ոչ ոք կրնայ բաժնեկից դառնալ հանրութեան դրամին:

Պաշտոնական աղբիւրները նկատել տուին, որ նոր տարաբը իրագործած է դրական կէտեր, որոնցմէ են. -

● Բջիջային հեռաձայնի ընկերություններուն մասին տրուած որոշումը դրական է այն իմաստով, որ ուշացումէն կ'օգտուէին երկու ընկերությունները:

● Պետութեան իրաւունքներուն պահպանում: Բջիջային հեռաձայնի երկու ընկերությունները ունին նիւթական պարտաւորություններ պետութեան նկատմամբ: Պետութիւնը դատարանին միջոցով պիտի ապահովէ գանձումները, նկատի ունենալով, որ ընկերությունները մերժած են կատարել վճարումները՝ պատճառաբանելով, որ գումարներուն շուրջ պետութեան եւ իրենց միջեւ համաձայնութիւն չէ գոյացած:

● Պետութիւնը կարողացաւ իմանալ ընկերություններուն ճշգրիտ շահը, ինչ որ առիթ պիտի տայ պետութեան սեփականաշնորհման գործընթացին մէջ ճշգրիտ իսկական արժէքը:

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Դ. «Տիրքան Ծամիւր» կոմիտէն կը գուժէ իր շրջանի վատակաշատ ընկերներէն՝

ՍՈՒՐԷՆ ԹԱՊԱԳԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2002ին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Մարի Թապագեան
- Տէր եւ տիկին Հայկ Թապագեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սերոբ Թապագեան եւ զաւակունք
- Տիրոջ Զարուհի Թապագեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Աւետիս Կէօզըկլիւլիւբեան
- Տէր եւ տիկին Ժաք Զէքէմեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ժան Կիւլմէթյ
- Պէքէրէճեան ընտանիք
- Չափարեան ընտանիք
- Գասպարեան ընտանիք
- Նէնէճեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, քեռայրին եւ հարազատին՝

ՍՈՒՐԷՆ ԹԱՊԱԳԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 1:30ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուր կէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Սերկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցությունները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար Միսայել, «Երանտեան» շէնք, Յրդ յարկ, Երեքշաբթի 3 եւ Չորեքշաբթի 4 Դեկտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Փառուլա Քէյվանեան
- Տոքթ. Ռոպէրթո Քէյվանեան
- Քարլա եւ Քաթիա Քէյվանեաններ
- Տէր եւ տիկին Բիւզանդ Քէյվանեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սարգիս եւ էֆրոնիա Գազգեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Բիւզանդ եւ Անժէլ Տէր Գրիգորեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Յակոբ եւ Ալիս Սարաֆեան
- Քէյվանեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ (ԺԱՆ) ԲԷՅՎԱՆԵԱՆԻ (Ծնեալ՝ Հալէպ, 1926ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 30 Նոյեմբեր 2002ին, Փատովայի մէջ, իտալիա:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Փիեի Մար եկեղեցւոյ մէջ:

- Սերկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցությունները համար դիմել հետեւեալ հասցէներուն.

Fax: 00390439763096 եւ E-mail: Keyvanian@LIBERO.IT.

ՉՕՐ. ԼԱՆՈՒՏ ՆԱԽԱՐԱՐ ԲԵՐՏԱՇԻՒՆ ԵՏ ԲՆԱՐԿԵՑ ԲԶԻԶԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹՂԹԱԾՐԱՐԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երկ Դատարանի մէջ ընդունեց նախկին վարչապետ Ռաշիտ Սոյիբ, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային բազմաթիւ հարցեր, յատկապէս տնտեսական տագնապը եւ «Փարիզ-2» ժողովին յաջորդելիք աշխատանքները:

Նախագահ Լահուտի այցելեց երեսփոխան Միշէլ Մոր: Քննարկուեցան ներքին քաղաքական հարցերը: Մոր նախագահ Լահուտի ներկայացուց նաեւ Մեթն շրջանի կարիքները:

Նախագահ Լահուտ ընդունեց Լիբանանի մէջ Առողջապահութեան Միջազգային Կազմակերպութեան

ներկայացուցիչ Հապիպ Լաթիֆին. որ ներկայացուց կազմակերպութեան 2002ի տեղեկագիրը: Քննարկուեցան Լիբանանի եւ նշեալ կազմակերպութեան միջեւ գոյութիւն ունեցող երկկողմանի յարաբերությունները:

Լաթիֆի նշեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է Լիբանանի մէջ բուժումի եւ ղեկորայի սակերու նուազեցման հարցը:

Նախագահ Լահուտ ընդունեց բանակի ընդհանուր հրամանատար Վոր. Միշէլ Սլէյմանը, որուն հետ քննարկեց ապահովական հարցեր:

Նախագահական պայտի հիւրերէն էին նաեւ «Միտրլիս» օդանաւային ընկերութեան ընդհանուր տնօրէն Մոհամէտ Հուր, Պէյրութի նահանգապետ Եագուպ Սարրաֆ եւ յոյն կաթողիկէ համայնքի թրիֆոլիի առաջնորդ Ժորժ Ռիաշի եպիսկոպոս:

ԲԵՐՏԱՇԻՒՆ ԱՅՆԵՆՑ ՉՕՐ. ԼԱՆՈՒՏ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երկ Երեկոյեան ընդունեց հաղորդակցութեան միջոցներու նախա-

ԿՈՒՉՈՒԻ

● Electro - mechanical engineering ընկերութիւնը կարիք ունի քարտուղարուիկի մը՝ 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն եւ արաբերէն գիտնալը եւ նոյն լեզուներով համակարգիչ գործածել գիտնալը պայման է: Հեռ. 01-378801-5 եւ 03-816189 թիւերով:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Վարդգէս Գըլըճեանի մահուան առիթով, տիկին Արաքսի Գըլըճեան եւ տեղեկութիւնները կը տրուին 1,000,000 լիբ. սուկի՝ Չալքայի Հ. Յ. Դ. «Գարեգին Նժդէ» ակումբին եւ 500,000 լիբ. սուկի՝ ԼՕԽի «Ա. Փափագեան» մասնաձիւղին:

● Նոյն առիթով, տեղեկութիւնները կը տրուին Սուրբ Կոստանեան 1,000,000 լիբ. սուկի, տեղեկութիւնները կը տրուին Սիմոն Մերտինեան 300,000 լիբ. սուկի, տեղեկութիւնները կը տրուին Վամբարձու Գըլըճեան 300,000 լիբ. սուկի՝ Չալքայի Հ. Յ. Դ. «Գարեգին Նժդէ» ակումբին:

ՎԵՐԶԻՆ ԵՐԿՈՒ ԵԼՈՅԹԵՐ

ԹԵՔԵՄԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԵՌԻԹԻՒՆ ՌԻՍԱՆՈՂԱՅ ԽՈՐՀՈՒՐԴ

Թեքեան Ուսանողական Թատերախումբը
Կը ներկայացնէ՝ ՆԻՔԸԼԸԻ ԵՄ ՍԻՐԱՆԻ

ԱՆՆԻ

Երաժշտական եւ պարային թատերախումբ
Բեմադրութիւն՝ **ԳՐԻԳՈՐ ՏԵԿԻՐՄԵՆՃԵԱՆ**

Տեղի կ'ունենայ «Յ. Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:
Ուրբաթ 6 եւ Շաբաթ 7 Դեկտեմբերին. ցերեկոյ՝ ժամը ձիւղ 4.30ին:
● Տոմսերը ստանալ տիպերէք «ճեք»-էն եւ ներկայացման օրերը կ'իջեմ:

Sponsors: LEBANESE CANADIAN BANK and LIBBY'S

Ուրախ լուր... սակերը նուազեցան

29 INCH TV \$499 +VAT

21 INCH TV \$219 +VAT

14 INCH TV \$139 +VAT

Արասարգիսեան ՀԱՍ. Պուրճ Համուտ Բաղաբապետ. հրապարակ Գեղարշակ Գեղարշակ 01-241000 29րդ մայր. մայրը Գեղարշակ հաստատ. կապուղի

TOSHIBA

ՊԵՅՅԵՆԿԵՆ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԵՆ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԿՈՉ ՄԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Նաեւ ուժեղ պատգամ մը դրկած է Մ. Նահապետներու՝ կոչ ուղղելով Ուաշինկթոնի եւ Հիւսիսային Քորէայի, որ յարաբերությունները բնականոն դարձնեն եւ կառչած մնան 1994ի մէկ համաձայնագիրին. իւրաքանչիւր կողմ միւսը կ'ամբաստանէ, զայն բռնաբարելու յանցանքով:

Մեկնաբաններ կ'ըսեն, թէ Չինաստան եւ Ռուսիա միայն սահմանափակ ազդեցութիւն ունին Հիւսիսային Քորէայի վրայ:

Սակայն Չինաստան, որ 1950էն 53 քորէական պատերազմին Հիւսիսային Քորէայի կողքին կռուած է, որեւէ երկրէ աւելի ազդեցութիւն ունի անոր վրայ՝ նկատի ունենալով, որ Պէյ-ճինկ կը հարթաթէ անոր վրտելանիւթին եւ սննդանիւթի ներածումներուն մեծ բաժինը, ինչպէս նաեւ անիկա կրնայ հաւանական «մոտէլ» ծառայել տնտեսական աստիճանական բարեկարգումներու:

Հոկտեմբերին, Հիւսիսային Քորէա խոստովանած էր, թէ կորիկային պէնքերու ծրագիր մը ունի: Այդ խոստովանութեան լոյսին տակ, Մ. Նահապետներ եւ անոնց դաշնակիցները, որոնց կարգին՝ Հարաբային Քորէա եւ Ճապոն, որոշած էին Դեկտեմբերէն սկսեալ ֆիուլի հարթաթումները դադարեցնել:

Փութիւնի այցելութեան նպատակն էր նաեւ Չինաստանի հանգստեան կոչուելիք եւ յառաջիկայ ղեկավարներուն հետ միացեալ ենթահող գտնել, յատկապէս ապահովութեան վերաբերեալ հարցերու մասին, ինչպէս՝ Հիւսիսային Քորէա, Իրաք եւ սիւրիական ղեմ պատերազմը, մինչ Մոսկուա եւ Պէյճինկ միասնաբար աւելի սերտ կապեր կը հաստատեն Մ. Նահապետներու հետ:

Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԵՌԻԹԻՒՆ ԶԱԼՔԱ

Ուրբաթ, 6 Դեկտեմբեր 2002, ժամը 10:30ին
«ՍԻՐՏ ՅԻՄՈՒՍԻ ՍՈՒՐԵ ՊԱՏԱՐԱԳ»

Պատարագէն ետք՝
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիւթ՝
«ՉԱՓԱՉԱՆՑ ՅՈՂՆՈՒԹԻՒՆ (STRESS)»

Բանախօս՝
ՏՈՔԹ. ՌՈՊԷՐ ԳԱՐԱԳԱՇ

ԵՐԱԵՐ

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԶԱՐԱԹ, 1 ՓԵՏՐՈՒՐ 2003

ԱՅՀԻԼ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿԸ, ԿԱՆԵԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԸ, ST. MARC ԱԽՏԱԾԱՆԱԶՄԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՆԵՏ ԳՈՐԾԱԿՅԱԲԱՐ ՆՈՅՏԵՐԵՐ ԱՍՍՈՒԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ Կ'ԸՆԾԱՅԷ ՅԱՏՈՒԿ ԱՌԻԹ՝ MAMMOGRAPHIE + ECHO 50000 Լ.Ո. ՓՈԽԱՆ 150000 Լ.Ո. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵԱՆ ԱՅՀԻԼ ԳՐԱՍԵՆՆԱԿԱՆ ՄԵՋ, ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՏԵԱՆ ԺԱՄԸ 8:30ԷՆ 4:30:

ՍԱՇՄԱՆՓԱԿ ԹԻՌԿ ԿՏՐՈՆԵՐ

ԱՅՍ ԱՌԻԹՈՎ ԻՐԱՔԱՆՉԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԿ ԶԻՐՕՐԷՆ ՊԵՏ ՕԺՏՈՒԹ MEDNET-INFO-SANTE ԲԺԾԿԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՅԱՆ ՀԵՌԱՋԱՅԱՅՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԿ ՏԱՐՈՒՄՆ ԲԱՐՏՈՎ:

ԱՅՀԻԼ ԱՅԷՏԻ ՕԷՆԲ. Բ. ՅԱՐԿ ՀԵՌ. 242556/7

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԶՆՋԵՑ ԶՈՒՐԻ ԵՒ...

Շարունակում Ա. Էջեց

Նիստը մերժեց «Հաստատությունից Գիտաբանության» երեսփոխանական պլոքի այն առաջարկը, թե Երոզական Միությունն հետ Լիբանանի գործակցության շարունակությունը պետք է վերատեսուծան ենթարկուի երեսփոխանական միացեալ յանձնախումբերուն կողմից:

Նիստը վաերացուց նաեւ քաղաքացիական օդանավորության մարզը աշխուժացնելու վերաբերեալ օրինագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԵՐԵՐԸ

- Երեսփոխան Ալի Խալիլ անդրադարձաւ «Փարիզ - 2» ժողովին եւ կառավարութեանն պահանջեց խորհրդարանական յանձնախումբերը նախապէս տեղեակ պահել կնքուելիք համաձայնագիրներէ, նախքան անոնց կնքումը:
- Երեսփոխան Միխայիլ Տահեր կոչ ուղղեց՝ ներքին միասնականութեան եւ «սիրտերու յուսուցումի» քաղաքականութեան շարունակումին՝ նկատել տալով, որ բազմաթիւ մարզերու մէջ Լիբանանի արձանագրած յաջողութիւնը ի դերեւ կ'ելլէ, եթէ միասնականութիւնը չքանայ:
- Երեսփոխան Իսրայիլ Պայան հարց դրաւ, որ հանգստեան կոչուած ուսուցիչներուն հատուցումները տակաւին կը մնան անվճար: Ան նաեւ անդրադարձաւ առողջապահական մարզին դիմագրաւած վանական հարցերուն:
- Երեսփոխան Սոհաւէտ Քապպանի հակառակ Ֆարթուշի խօսքին եւ «Փարիզ - 2» ժողովը նկատեց տնտեսութիւնը բարելաւելու առաջին քայլը եւ Լիբանանի համար պատուութեան սուր ուղի մը սկիզբը:
- Երեսփոխան Արամ Շահապէ պարտաւորեց լիբանանական երեսակալական սակերով հաշուեցուցներուն եւ պետական ու սեփական մարզերու ուսուցիչներուն հարցերը:
- Երեսփոխան ձոր Գասարճի ակնարկեց բջիջային հեռաձայնի ընկերութիւններու հարցին եւ շեշտեց, որ «սիրտերու յուսուցումի» քաղաքականութիւնը անգամ մը եւս հարիւրաւոր միջոցներ արժան է: Գասարճի նշեց, որ 600 միլիոն տոլարի մտրիակները ստեղծելու նախաձեռնութիւնը քաղաքական բառագիտութեան մէջ կը նշանակէ հրաժարիլ պետական

գանձարկղին իրաւունքը նկատուող այդ գումարէն: Ան պահանջեց կառավարութեան ամբողջական փոփոխութիւնը:

Երեսփոխաններուն խօսքերէն ետք, վարչապետ Հարիրի պատասխանեց «Փարիզ - 2»-ի, անոր յաջորդող հանգրուանին, ինչպէս նաեւ թեր եւ դէմ արտախառնուող բոլոր երեսփոխաններուն:

Վարչապետը հաստատեց, որ «Փարիզ - 2»-ի արդիւնքները շատ կարեւոր են եւ դրական ազդեցութիւն պիտի ունենան երկրին տնտեսական բարգաւաճման ճիգերուն վրայ:

Հարիրի դիտել տուաւ, որ «Փարիզ - 2» ժողովը չի պատկանիր կառավարութեան կամ վարչապետին, եւ թէ ձայնարկութիւններ արձանագրէ ոչ մէկ արգելք կայ պալի քննադատելու:

Վարչապետ Հարիրի, ակնարկելով բջիջային հեռաձայնի ընկերութիւններուն շուրջ բարձրացած աղմուկին, հաստատեց, որ հարիւրաւոր միջոցներու վնաս արձանագրելու մասին խօսքերը անհեթեթ են, որովհետեւ ոչ մէկ վնաս կ'արձանագրուի:

Հարիրի ակնարկեց նաեւ, որ կառավարութիւնը կ'աշխատի հանրութեան դրամը կայուն պահել եւ յարմարագոյն ձեւեր այն համաձայնութիւնն է, այսինքն՝ 600 միլիոն տոլարի արժողութեամբ մտրիակներու առեցումը օգտակար կը հանդիսանայ երկու ընկերութիւններուն, իսկ մնացեալ ժխտական եւ քննադատական բոլոր յայտարարութիւնները արմատական սխալներ են:

Վարչապետ Հարիրի կառավարութեան ինքնապաշտպանութիւնը կատարած ընթացքին հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրտահի ժողովարար չէր գտնուէր:

Վարչապետ Հարիրիէն ետք խօսք առաւ խորհրդարանի նախկին նախագահ, երեսփոխան Հիւսէյն Հիւսէյնի, որ առարկեց վարչապետին կատարած ընդմիջումին դէմ՝ շեշտելով, որ այդ ընդմիջումը խորհրդարանական կարգ ու կանոնը կը խախտէ, յատկապէս օրէնսդրական այնպիսի նիստի մը ընթացքին, ուր բջիջային հեռաձայնի հարցը օրակարգի վրայ չէ յիշուած նոյնիսկ:

Հիւսէյնի պահանջեց, որ վարչապետ Հարիրիի խօսքերը շնչուին ատենագրութեան: Ան առաջարկեց բջիջային հեռաձայնի հարցին համար յատուկ նիստ մը գումարել եւ հոն լսել վարչապետին բացատրութիւնները:

Հիւսէյնի ընդգծեց, որ նման նիստի մը վարչապետին խօսքը կը կաշկանդէ խորհրդարանը, «ինչպէս որ կաշկանդած է նախարարաց խորհուրդը եւ ոչ մէկը կ'արտախառնուի այդ մասին»:

Հիւսէյնի կոչ ուղղեց՝ յարգելու երկրին իշխանութիւնները՝ օրէնքին համաձայն, եւ սպաննաց լքել ժողովը, եթէ չգործադրուի Սահմանադրութիւնն ու խորհրդարանական կանոնները:

Խորհրդարանը վերադարձաւ իր աշխատանքին երեկոյեան ժամը 6:30ին, քննարկելու համար օրակարգի վրայ տեղ գտած մնացեալ կէտերը, որոնցմէ կարեւորագոյնը եղաւ ելեկտրականութեան եւ ջուրի անվճար հաշուեցուցներուն ներում շնորհելու որոշումը, բայց որուն, կը շնչուի 1995էն մինչեւ 2001 չվճարուած ջուրի եւ ելեկտրականութեան հաշուեցուցները:

Խորհրդարանը վաերացուց նաեւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի անդամագրուած քաղաքացիներուն յատուկ օրինագիծը, որուն հիմամբ, ապահովագրուած քաղաքացիներուն ստանալ նպաստ նշեալ սնտուկէն եւ կրնան օգտուիլ նաեւ անոր պատկերները եւ փոխադրաւարք, այսինքն՝ եթէ պատկեր ապահովագրուած է ծնողը կ'ըլլայ օգտուողը: Այս օրէնքը հաստատուեց կը կիրարկուի ընտանիքին հորը եւ մորը պարագային:

البيروت الاحواء القديس القديس

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

الاتجار المستقبل الديار النصار السفير

Տեղական մամուլը իր 2 Դեկտեմբերի թիւով անդրադարձած է բջիջայինի թղթածրարին առնչուող իրադարձութիւններուն եւ արձագանգներուն, ֆրանսական ուժերուն կողմէ օտարահպատակներու, անոնց կարգին՝ շուրջ 60 իբրանացիներու դուրս բերուելուն Փղոսկրեայ Ափունքէն, ամերիկեան եւ բրիտանական օդանավերուն կողմէ փոթորիկներու, իսկ ոմբակոծման Պարսի մէջ:

«Լիուս» գրած է, թէ հաղորդակցութեան նախարար Ժան Լուի Քըրտահի յայտարարած է, թէ միջին լուծում գոյութիւն չունի կամ պաշտօնակրուում եւ կամ հրաժարական: Ըստ թերթին, Պասպտա կը պաշտպանէ բջիջայինի համաձայնութիւնը, իսկ պետութեան իրաւունքները ապահովուած են: Թերթը նշած է նաեւ, թէ ՍՖէյր պատրիարքը ըսած է, թէ սեփական նաշնորհման շուրջ ստեղծուած բանավեճը հոգիներու ապահովութիւն չի տար, իսկ Քարամէ «կը յարձակի» բջիջայինի համաձայնութեան վրայ:

«Անուար» նշած է, թէ ՍՖէյր պատրիարք թափանցիկութիւն կը

պահանջէ դրամական հարցերու առնչութեամբ: Թերթը գրած է. «Որո՞նք են բջիջայինի բաժնետէրերը եւ ինչո՞ւ այս անյատարկութիւնը. հարցումներ, որոնց պատասխանը գիտնալու իրաւունք ունի տուրք վճարող քաղաքացիները»:

Թերթին համաձայն, պետութիւնը կ'ենթարկուի քաղաքական եւ տնտեսական փոթորիկներու, իսկ կառույցները կը նահանջեն իւրաւորութիւններու դիմաց:

«Նահար» նշած է. «Վաղը պիտի ըլլայ «բջիջայինի փոթորիկ»ին վճռական հանգրուանը: Քըրտահի կը մերժէ ստորագրել համաձայնութիւնը եւ հրաժարիլ պետութեան իրաւունքներէն: Բջիջայինի հարցը պիտի քողակեցնէ պետութեան գայթակղութիւնները եւ պիտի հաստատէ «Փարիզ - 2»-ի գումարներու միջուկը»:

Առաջին էջի յուրերու կարգին թերթերը լուսարձակի տակ անած են Փաղանգաւոր Կուսակցութեան հիմնադրութեան 66րդ յայտարարութեան եւ կը յարձակին կառավարութեան վրայ: Ըստ թերթին, Հըս սիալ կը համարէ բջիջայինի մասին կառավարութեան որոշումը:

Թերթը նաեւ գրած է, թէ փոխ վարչապետ Իսամ Ֆարէս կ'ըսէ. «Կառավարութեան աշխատանքը վերանորոգումի կը կարօտի, իսկ երկիրը կարիք ունի կառավարութեան մը, որ աւելի ընդունելի ըլլայ ժողովուրդին կողմէ»:

«Քիֆաի Արապի» նշած է, թէ Կօր. Լահուտ բջիջայինի հարցին լուծման մէջ բազ-

մաթի դրական կողմեր կը տեսնէ, իսկ Պըրրի կը յայտարարէ, թէ կառավարութիւնը ծանր բեռի մը վերածուած է:

«Մուսթաքպալ» այս մասին գրած է, թէ նախագահ Լահուտ վարչապետ Հարիրիի հետ կը քննէ սեփականաշնորհման քայլերու արագացման գործընթացը եւ կը յայտարարէ, թէ երկիրը կը գտնուի բարգաւաճման գործընթացի մը սեմին:

«Տիար»-ի համաձայն, «Պարկեշտ անձի մը համար արգիլուած է մերժել բջիջայինի միլիառներու համաձայնութիւնը: Քըրտահի կը մերժէ ստորագրել համաձայնութիւնը եւ հրաժարիլ պետութեան իրաւունքներէն: Բջիջայինի հարցը պիտի քողակեցնէ պետութեան գայթակղութիւնները եւ պիտի հաստատէ «Փարիզ - 2»-ի գումարներու միջուկը»:

Առաջին էջի յուրերու կարգին թերթերը լուսարձակի տակ անած են Փաղանգաւոր Կուսակցութեան հիմնադրութեան 66րդ յայտարարութեան եւ կը յարձակին կառավարութեան վրայ: Ըստ թերթին, Հըս սիալ կը համարէ բջիջայինի մասին կառավարութեան որոշումը:

Թերթը նաեւ գրած է, թէ փոխ վարչապետ Իսամ Ֆարէս կ'ըսէ. «Կառավարութեան աշխատանքը վերանորոգումի կը կարօտի, իսկ երկիրը կարիք ունի կառավարութեան մը, որ աւելի ընդունելի ըլլայ ժողովուրդին կողմէ»:

«Քիֆաի Արապի» նշած է, թէ Կօր. Լահուտ բջիջայինի հարցին լուծման մէջ բազ-

Շարք՝ էջ 9

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՄԵՌՈՒԹԻՒՆ

ՄՏՔՈՎ ԹԵՐԱՃ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ԶՈՒՐԹՆՈՅ» ԿԵԴՐՈՆ

15 ԱՍԵՆԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՈՒՏԵՍԵՂԵՆԻ ԵՒ ՁԵՆԱՅԻՆ ԱՃԻՆԱՆՆԵՐՈՒ ՎԱՃԱՐԸ

Տեղի կ'ունենայ 4 եւ 5 Դեկտեմբեր 2002, կէսօրէ առաջ ժամը 10:00ԷՆ սկսեալ մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00, «Չուարթնոց» կեդրոնին մէջ:

Հասցէ. Հայ Աւետ. Հոգեւոր եկեղեցւոյ շրջափակ:

ԵՐԱԿԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

Հ. Յ. Դ. ԼԵՍԻ

2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ

Հ. Յ. Դ. ԼԵՍ. 30ամեակ

1973

2003

ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՓՈՒԹ

Ճակերոյք Պարահանդես

Կիրակի, 5 Յունուար 2003, երեկոյեան ժամը 9:30ԷՆ սկսեալ PHOENICIA դահլորկին մէջ

Երգահանդես

Երկուշաբթի, 6 Յունուար 2003, երեկոյեան ժամը 7:30ԷՆ սկսեալ, UNESCO-ի օրահին մէջ

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէն - Obelisk գրախանութ. Ամբիլիաս Աղբալեան մարզաձախութային կեդրոն, Սըզիթ - Համազգայինի գրախանութ. Շաղոյեան կեդրոն, Պուրճ Համուտ - Տիւրքոյք Geka, Պուրճ Համուտ - Սթիւտիո Վալէ, Երկաթ կամուրջի մօտ. Հաճըն - Համազգայինի «Կոմիտաս» գրախանութ. Չորաթ Էլ Պլաք - Համազգայինի Լեւոն Շանթ Կեդրոն, Պուրճ Համուտ

Schwarzkopf PROFESSIONAL

Osis +

PHOTO NERSES

ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ - ՈՐԿԱՎՈՐ ԼՈՒՍԱԿԱՐԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ Որ հասած ԱՐԴՐԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով դրակար եւ զամբան լաթերով

Ստանձնում՝ 20 վայրկեանէն:

Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի կամ FLOPPY տիպի վրայ

Cameraներու ճիշտ հաւաքումը, ալպաններ եւ ցկարի շրջանակներու ընտրի տեսակած:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիծերով:

Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի փողոց «Սանթրո Արի»-ի դիմաց. Հեռ. 01-261858 եւ 01-255992

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

IGOL MOTOR OIL FUEL CARD

Միջապալին Քաղաքական Կեսանք

ՓՈՒԹԻՆ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԻՄԵ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտին հետզհետեւ մեծ հռչակ կը շահի իր արտաքին քաղաքական նախաձեռնութիւններուն համար, յատկապէս՝ Պալէստինայի արտաքին քաղաքականութեան նորութիւնները շուրջի մէջ կը մնան, երբ կ'անդրադառնանք այն փոփոխութիւններուն, որ Փուտին անհասկնալի ձեւով եւ առանց քննարկումներու կատարած է նախկին խորհրդային Միութեան երկիրներուն հետ կրեմլինի յարաբերութիւններուն մէջ: Եղածը յեղափոխութեան մը նուազ ուժգին չէ եւ կը նպատակադրէ վերահաստատել Ռուսիոյ ազդեցութիւնը նախկին խորհրդային Միութեան տարածքին:

խորհրդային Միութեան փլուզումէն ետք, գրեթէ տասնամեակ մը առաջ, Ռուսիոյ բնագոյնին առաջին քայլը եղաւ ստեղծել Անկախ Պետութիւններու Հասարակապետութիւնը (ԱՊՀ): Պորիս Ելցին եւ իր գործակիցները գիտէին, որ իրենց շահերը չէին համընկներ ԱՊՀի միւս անդամներուն շահերուն հետ: Կրեմլին ԱՊՀն կը համարէր այն մեքանիզմը, որուն միջոցով պիտի պահպանուէր Ռուսիոյ գերութի կարգավիճակը եւ անոր գոյութիւնը տեսակ մը փոխհաստեցում մըն էր կայսրութեան մը փլուզման դէմ:

Նախկին խորհրդային Միութեան միւս երկիրներուն համար ԱՊՀն այն կառույցն էր, որ պիտի ապահովէր ռուսական ապրանքներու, ինչպէս նաեւ քարիւղի եւ բնական կազի հոսքը գեղջուած գիներով եւ առանց Մոսկուայի ճնշիչ ազդեցութեան: Երկու կողմերն ալ յուսախաբ եղան. Ռուսիա չկրցաւ իր տնտեսական գերագանց ուժը քաղաքական ազդեցութեան վերածել, իսկ միւս երկիրները գզացին, որ տնտեսապէս կախեալ ըլլալով Մոսկուայէ, քաղաքականապէս ալ կախեալ պէտք է ըլլան:

Երկար տարիներ կրեմլին կը խուսափէր այդ հիմնական իրականութիւնը ճանչնալ: Ընդհակառակը, Ելցինի տարբեր կառավարութիւնները փորձեցին ամբողջով ԱՊՀն՝ մեծ թիւով նոր հիմնարկութիւններ եւ քաղաքական ծրագիրներ հրապարակ նետելով, որոնք կը նպատակադրէին իրարու մօտեցնել անդամ երկիրները եւ, միւս կողմէ, սահմանափակել Մոսկուայի կայսրապաշտական բռնան հետեւանքները: Սակայն դարձեալ՝ ամբողջական ձախողութիւն. գրեթէ տասնամեակի մը ընթացքին 2500 օրինագիծներ որդեգրուեցան, բայց անոնցմէ ոչ մէկը ամբողջական ձեւով կիրարկուեցաւ: Իսկապէս, ԱՊՀի ղեկավարները կ'ենթադրէին մոռցան նոյնիսկ, որ նպատակն էր թիւով փաստաթուղթեր ստորագրած են:

Իրրեւ արդիւնք՝ ԱՊՀն դարձաւ անձեւ կառույց մը, որ կարողութիւնը չունի որեւէ կարեւոր բան ընելու: Այս տարուան Մայիսին ԱՊՀի անդամներուն գրեթէ կէսը մերժեց վերանորոգել 1992 Մայիսին թաշտեանի մէջ կնքուած ԱՊՀի Հաւաքական Ապահովութեան Դաշինքի արդէն իսկ պաշտօնական իրենց մասնակցութիւնը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՍԱՌՈՒՄՆԵՐ

Հակառակ երկար քննարկումներու, ԱՊՀի անդամները տակաւին չեն յարգած ազատ տնտեսական գոտի մը հիմնել: 1998ի Ռուսիոյ տնտեսական տագնապէն ետք, կարգ մը ԱՊՀի անդամներ սկսան մաքր-սալին պատերազմ մղել իրարու միջեւ: Իրրեւ օրէնք՝ այն երկիրներուն մէջ, ուր ռուսական ապրանքները մրցակիցներ ունին, ապա մաքսային տուրքի կ'ենթարկուին, եւ նոյն այդ երկիրները խնդրեցին Մոսկուայէն, որ ան շարունակէ գեղջուած գիներով քարիւղի մատակարարումը: Երբ կրեմլին իր հաւանութիւնը տուաւ, շուտով անդրադարձաւ, որ այդ երկիրները կը ղեկավարին փակելու իրենց պարտքերը, եւ թէ անոնք մտաւոր փակուած էին վճարելու արեւմտեան դրամական հիմնարկութիւններուն եւ կառավարութիւններուն իրենց ունեցած պարտքերը:

Այս խաղին լաւ ծանօթ էր Փուտին, երբ իշխանութեան գլուխ եկաւ. սակայն գայն զայն զայնուցողը եղաւ այն իրականութիւնը, որ ԱՊՀն միակամ պահելու իր փորձերուն դիմաց կը խաղցուէին ուրիշ ռազմավարական խաղեր, որոնք Ռուսիոյ շահերուն դէմ էին, ինչպէս, օրինակ, շրջանին մէջ Ռուսիոյ գինուորական միջամտութիւններուն ընդդիմացող Կեդրոնական Ասիայի Միութիւնը եւ ՎՈՒՈՒԱՄ տնտեսական միութիւնը, որուն դաշնակը կամ ծնունդին պատճառը Միացեալ Նահանգներն էին:

Փուտինին հակադարձութիւնը շատ արագ էր: Նոյնամբերի սկիզբը ան բոլոր անդամ երկիրներուն յայտարարեց, թէ մտադրած է շնջել առանց վիզայի եր-



